առարկա դարձնեն այն հանգամանքը, թե արդյոք գործին մասնակցող անձը և փաստաբանը ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանել են վարձատրության խելամիտ չափ՝ **փաստացի կատարման ենթակա ծառայությունների համար**: Եթե դատարանի գնահատմամբ նշված չափը խելամիտ չէ, ապա մյուս չափանիշների հաշվառմամբ հատուցման ենթակա գումարը կարող է էականորեն նվազեցվել, սակայն եթե ծառայությունների մատուցման պայմանագրով ի սկզբանե որոշվել է նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված վճարի խելամիտ չափ, ապա թեկուզև հայցի մասնակի բավարարման դեպքում հատուցման ենթակա գումարը չի կարող էականորեն նվազեցվել *(տե՛ս Ռաֆիկ Հովհաննիսյանն ընդդեմ Լևոն Դավթյանի և մյուսների թիվ ԵՄԴ/2132/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.09.2020թ. որոշումը):*

Հայցվոր կողմը դատարան է ներկայացրել միջնորդություն, որով խնդրել է պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Տվյալ դեպքում Դատարանին ներկայացված՝ «ՆՈՐՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 19.09.2024 թվականին կնքված «Հանձնարարության պայմանագիր 34-24» պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով, հանձնակատարը պարտավորվում է հանձնարարողի անունից և նրա հաշվին մատուցել միայն հետևյալ իրավաբանական ծառայությունները՝ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊԶԲ-24-9/11 ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների և/կամ որոշումների վիճարկման վերաբերյալ դատական գործով Հանձնարարողի իրավունքների և օրինական շահերի ներկայացում»: Նույն պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված Հանձնարարության կատարման համար Հանձնարարողը որպես վարձատրություն Հանձնակատարին որպես կանխավճար վճարելու է 300.000 ՀՀ դրամ, որից 150.000 ՀՀ դրամը սույն պայմանագրի կնքումից հետո 10-օրյա ժամկետում, իսկ մնացած 150.000 ՀՀ դրամ գումարը վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում»:

Հիմք ընդունելով վերը հայտնած իրավական դիրքորոշումները, այն հանգամանքը, որ սույն գործով անցկացվել է մեկ դատական նիստ, գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով, Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է սահմանել 50.000 ՀՀ դրամը և բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊԶԲ-24-9/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 16.08.2024 թվականի որոշումն և «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 26.08.2024 թվականի թիվ 141 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

1.1. Անվավեր ճանաչել «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության

նախարարության պատվիրատուի ղեկավարի 26.08.2024 թվականի թիվ 141 որոշումը:

1.2. Մնացած մասով հայցը մերժել:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

2.1 Պետական տուրքի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am